ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

Երևան, Բաղրամյան 19
Հեռ 011-513-288

01.06.2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սիմոնյան

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածների՝ որպես օրենսդրական նախաձեռնություն, Ձեզ ենք ներկայացնում <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են.

ա) օրենքների նախագծերի փաթեթը (հիմնական զեկուցող՝ Նարեկ Զեյնալյան),

բ) օրենքների նախագծերի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքներում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը,

դ) օրենքների նախագծերի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով օրենքների նախագծերի փաթեթը դնել շրջանառության մեջ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ՝ ՆԱՐԵԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ
ՀՌԻՍԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի 16-րդ հոդվածը լրացնել նոր հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

<<***9.*** Առողջապահության ոլորտի պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:>>:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

# «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 5-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ԳԼՈՒԽ 5

***ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

**Հոդված 32. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական կամ հայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները**

1. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների աշխատողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ.

2. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, որը նշանակվում և ազատվում է օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

3. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի հավակնորդը կարող է լինել այն անձը, որն ունի բարձրագույն բժշկական կրթություն կամ առողջապահության կառավարում և կազմակերպում մասնագիտությամբ կրթություն, հանրային ծառայության առնվազն չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

4. Առողջապահական՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի հավակնորդը կարող է լինել այն անձը, որն ունի բարձրագույն բժշկական կրթություն՝ թերապևտի կամ մանկաբույժի կամ ընտանեկան բժիշկ մասնագիտությամբ, հանրային ծառայության առնվազն չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

5. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական ոչ առևտրային կազմակերպություններում, մարզային հոգեկան առողջության ոլորտի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի ղեկավարը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն և կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի դեպքում:

6. Առողջապահական՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի ղեկավարը կարող է կատարել, տվյալ կազմակերպությունում, հետևյալ մասնագիտությամբ այլ վճարովի աշխատանք՝ թերապևտ կամ մանկաբույժ կամ ընտանեկան բժիշկ:

**Հոդված 32.1 Առողջապահական՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող**

**առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը**

1.Առողջապահական՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատում է Կառավարությունը:

2. Առողջապահական՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման թեստային առաջադրանքների և հարցազրույցի հարցաշարերը կազմում և հաստատում է լիազոր մարմինը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կազմակերպությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստի և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատվում են համապատասխանաբար լիազոր մարմնի, մարզպետի կամ համայնքի ղեկավարի հրամանով:>>:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

<<Սույն կետով սահմանված կարգավորումները չեն վերաբերում առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններին:>>:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**<<Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության**

### 1. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկայումս Հայաստանի Հանրապետության 10 համայնքներում գործում են հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններ, որոնցից 208-ը մարզային ենթակայության են, իսկ 98-ը՝ համայնքային ենթակայության: Շուրջ 82 բժշկական ամբուլատորիաներ իրենց կազմակերպաիրավական ձևով համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ են, որոնք համարվում են ընտանեկան բժշկի գրասենյակներ, սահմանված կարգով ունեն ընտանեկան բժշկության լիցենզիա և այդ կազմակերպություններում ընտանեկան բժիշկը համատեղության կարգով զբաղեցնում է նաև տնօրենի պաշտոնը:

Տեղական ինքնակառավարման համակարգում, համայնքների խոշորացման գործընթացով պայմանավորված, գործող օրենքներում նկատվում են դրույթներ, որոնք դժվարացնում են առողջապահական՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների կառավարումը: Մասնավորապես՝ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքներում, ինչպես նաև դրանցից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերում կան տարբեր կարգավորումներ, որոնք բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների տնօրենների ընտրության համար հնարավորություն չեն տալիս ձևավորել միասնական մոտեցում:

Համաձայն <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ կառավարությունը 2022 թվականի փետրվարի 3-ին ընդունել է <<Առողջապահական պետական ոչ առեվտրային կազմակերպությունների եվ հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության նշանակման մրցույթի օրինակելի կարգը հաստատելու եվ նրանց հետ կնքվող

աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հուլիսի 7-ի թիվ 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 129 որոշումը: Ըստ այդ որոշման N 1-ին հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի՝ կազմակերպության գործադիր մարմնի պաշտոն զբաղեցնող անձը չի կարող կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից՝ բացառությամբ մարզային հոգեկան առողջության ոլորտի, **գյուղական բժշկական ամբուլատորիաների և առողջության կենտրոնների գործադիր մարմինների ղեկավարների**: Ելնելով այդ որոշումից, հաստատվել են համատեղ ՀՀ առողջապահության նախարարի հրամանը և համապատասխան մարզերի մարզպետների որոշումները: Համաձայն այդ իրավական ակտերի գյուղական բժշկական ամբուլատորիների, առողջության առաջնային պահպանման կենտրոնների, գյուղական առողջության կենտրոնների գործադիր մարմինների ընտրությանը ներկայացվող պահանջներն են՝ բարձրագույն բժշկական կրթություն, ներքին հիվանդություններ, թերապիա, մանկաբույժ և ընտանեկան բժիշկ: Ստացվում է, որ գյուղական բժշկական ամբուլատորիաները և առողջության կենտրոնները համարվում են համայնքային ենթակայության տակ գործող ՀՈԱԿ-ներ, սակայն դրանց գործադիր մարմինների ղեկավարները կարող են ընտրվել համապատասխան մարզպետի որոշմամբ:

Մյուս կողմից, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 9-րդ հոդվածով ամրագրված է՝ Համայնքային կազմակերպությունների վրա տարածվում են ՊՈԱԿ-ների օրենքի պահանջները: Հետևաբար, բոլոր իրավակարգավորումները, որոնք վերաբերում են պետական ոչ առևտրային կազմակերպություններին, տարածվում են նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին:

Վերոգրյալից հետևում է, որ անհրաժեշտ է առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումը դարձնել կառավարելի: Մյուս կողմից, անհրաժեշտ է հաշվի առնել Հայաստանում առողջապահության ոլորտի կադրային ներուժի պատկերը: Ելնելով վերը նշված արձանագրումներից, նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

ա) Առողջապահության ոլորտի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների գործադիր մարմինների պաշտոնում ընտրությունները

(նշանակումները) իրականացնել <<Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին և դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին համապատասխան.

բ) Առողջապահության ոլորտի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների աշխատողների աշխատանքային հարաբերությունները կարգավորել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ.

գ) Առողջապահության ոլորտի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնել գործադիր մարմնի միջոցով"

դ) Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի հավակնորդին ներկայացնող պահանջ սահմանել բարձրագույն բժշկական կրթությունը կամ առողջապահության կառավարում և կազմակերպում մասնագիտություն ունենալը"

ե) Առողջապահական՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին թույլատրել, տվյալ կազմակերպությունում, կատարել այլ վճարովի՝ թերապևտի կամ մանկաբույժի կամ ընտանեկան բժշկի մասնագիտություններով աշխատանք:

**2.Կարգավորման նպատակը և բնույթը**

Նախագծի նպատակն է առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների համար սահմանել իրավակազմակերպչական միասնական ձևեր, որով հնարավոր կլինի արդյունավետ կազմակերպել նրանց աշխատանքները: Միաժամանակ, առաջարկվում է ստեղծել միասնական օրենսդրական դաշտ: Վերջինս իրավաչափ կդարձնի առողջապահական ոլորտի կազմակերպությունների կառավարումն ու արդյունավետ՝ բնակչության բժշկական օգնությունն ու սպասարկումը:

**3.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**

Նախագիծը մշակվել է ՀՀ Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի անդամների կողմից:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

<<Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>>, <<Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքում լրացում կատարելու մասին>> օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ նոր օրենքների և կառավարության որոշումների փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանա։

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին

**Հոդված 16. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակելը և ազատելը**

1. Գործադիր մարմնի պաշտոնում կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող՝ Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

1.1. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվում են մրցույթով:

1.2. Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Հարցազրույցի ամբողջ ընթացքը տեսանկարահանվում է:

1.3. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը համալրելու համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցները հարցազրույցի ժամանակ մրցութային հանձնաժողով են ներկայացնում համապատասխան պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման իրենց մշակած հայեցակարգը:

1.4. Պետական կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

1.5. Մինչև գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը և անցկացնելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար է նշանակում սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող անձի կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ գործադիր մարմնի տեղակալին մինչև վեց ամիս ժամկետով:

1.6. Եթե գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի որոշմամբ՝ սույն հոդվածի 1.5-րդ մասով սահմանված ժամկետը չգերազանցող ժամկետով:

1.7. Պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը կարող է ժամանակավորապես զբաղեցնել տվյալ պաշտոնի համար հայտարարված մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները բավարարող անձը:

1.8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը, պահպանելով սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում որոշակի ժամկետով կատարում է նշանակում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի՝

ա) հղիության և ծննդաբերության արձակուրդի դեպքում.

բ) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.

գ) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

դ) իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.

ե) օրենքով սահմանված այլ դեպքերում:

2. Գործադիր մարմնի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

ա) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.

բ) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

գ) որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

3. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է այդ մասին.

բ) լրացել է նրա 65 տարին.
գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.
դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.
ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.
զ) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված հանգամանքները.
է) նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի մեկ տոկոսը.
ը) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.
թ) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.
ժ) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.
ժա) դատական կարգով նրա ղեկավարած պետական կազմակերպությունը ճանաչվել է սնանկ, կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.
ժբ) պետական կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.
ժգ) մեկ տարվա ընթացքում օրենսդրության խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.
ժդ) առկա են օրենքով սահմանված այլ հիմքեր:
4. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:
5. Սույն հոդվածի 3-րդ կետի «բ», «գ», «ը», «թ», «ժ», «ժբ» և «ժգ» ենթակետերով նախատեսված դեպքերում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությունը տեղի ունենալու կամ համապատասխան որոշումը, վճիռը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելու հաջորդող օրը:
Սույն հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշանակված օրվանից:
Սույն հոդվածի 4-րդ կետում նախատեսված դեպքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են մահվան պահից:
Սույն հոդվածի 3-րդ կետի այլ ենթակետերով նախատեսված դեպքերում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում:
6. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների ընտրություններն իրականացվում են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
7. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:
8. Հանրակրթության ոլորտի պետական ուսումնական հաստատության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերին համապատասխան:
*(16-րդ հոդվածը լրաց. 04.06.02 ՀՕ-357-Ն, 04.02.04 ՀՕ-33-Ն, փոփ. 24.10.07 ՀՕ-227-Ն, 05.02.13 ՀՕ-1-Ն, խմբ., լրաց., փոփ. 09.12.20 ՀՕ-490-Ն, լրաց. 01.07.21 ՀՕ-287-Ն, խմբ. 10.12.21 ՀՕ-392-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-174-Ն)*

***9.*** Առողջապահության ոլորտի պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում ընտրությունը (նշանակումը) իրականացվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքին և դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին

~~ԳԼՈՒԽ 5~~

~~*ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ*~~

~~**Հոդված 32.** **Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը**~~

~~1. Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատում է Կառավարությունը:~~

~~2. Լիազոր մարմնի ենթակայությամբ առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի թեստային առաջադրանքների և հարցազրույցի հարցաշարերը հաստատում է առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմինը, իսկ մարզպետարանի ենթակայությամբ առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի թեստային առաջադրանքների և հարցազրույցի հարցաշարերը հաստատում է համապատասխան մարզպետը:~~

~~3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կազմակերպությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստի և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատվում են լիազոր մարմնի և մարզպետի համատեղ հրամանով:~~

ԳԼՈՒԽ 5

*ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

**Հոդված 32. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և**

**պետական կամ հայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները**

1. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների աշխատողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ.

2. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, որը նշանակվում և ազատվում է օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

3. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի հավակնորդը կարող է լինել այն անձը, որն ունի բարձրագույն բժշկական կրթություն կամ առողջապահության կառավարում և կազմակերպում մասնագիտությամբ կրթություն, հանրային ծառայության առնվազն չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

4. Առողջապահական՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի հավակնորդը կարող է լինել այն անձը, որն ունի բարձրագույն բժշկական կրթություն՝ թերապևտի կամ մանկաբույժի կամ ընտանեկան բժիշկ մասնագիտությամբ, հանրային ծառայության առնվազն չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

5. Առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերություններում և պետական ոչ առևտրային կազմակերպություններում, մարզային հոգեկան առողջության ոլորտի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի ղեկավարը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն և կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության կամ արտակարգ իրավիճակի դեպքում:

6" Առողջապահական՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող գործադիր մարմնի ղեկավարը կարող է կատարել, տվյալ հաստատությունում, հետևյալ մասնագիտությամբ այլ վճարովի աշխատանք՝ թերապևտ կամ մանկաբույժ կամ ընտանեկան բժիշկ:

**Հոդված 32.1 Առողջապահական՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և**

**նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը**

1.Առողջապահական՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատում է Կառավարությունը:

2. Առողջապահական՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման թեստային առաջադրանքների և հարցազրույցի հարցաշարերը կազմում և հաստատում է լիազոր մարմինը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կազմակերպությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստի և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատվում են համապատասխանաբար լիազոր մարմնի, մարզպետի կամ համայնքի ղեկավարի հրամանով:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

### Հոդված 35. Համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունները

1. Համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝

1) հրավիրում և վարում է ավագանու նիստերը՝ սույն օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով.

2) համայնքի ղեկավարը նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրվում են կայքում.

3) համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

3.1) մշակում և ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունը.

3.2) տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքային մասհանումների ծախսման ծրագրերը, դրանցում առաջարկվող փոփոխությունները.

4) հաստատում է աշխատակազմի գործավարության կարգը.

5) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների, կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը՝ սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքում.

6) համայնքային ծառայության մասով աշխատակազմի կառուցվածքների վերաբերյալ որոշման նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.

7) աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի,

հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը.

8) համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

9) համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

10) նշանակում և ազատում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին.

11) համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման <u>կարգը</u> հաստատում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված մարմինը: Համայնքի բնակավայրերում գտնվող համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ: Մինչև համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի կայացումը համայնքի ղեկավարը կարող է նշանակել համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով: Եթե հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ երեք ամիս ժամկետով:

<u>Սույն կետով սահմանված կարգավորումները չեն վերաբերում առողջապահական՝ պետությանը հարյուր տոկոս սեփականության իրավունքով պատկանող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատություններին:</u>

11.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի կազմում ընդգրկված, 500-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրում վարչական ղեկավար ունենալու կամ բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններից բխող գործառույթների իրականացումը մեկ այլ բնակավայրի վարչական ղեկավարին վերապահելու մասին.

12) հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ.

12.1) օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընդունում է տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշում.

13) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու վերաբերյալ.

14) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման <u>կարգը</u> հաստատելու վերաբերյալ.

15) կնքում է Հայաստանի Հանրապետության համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը: Ավագանու հաստատմանն է ներկայացնում միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերը.

16) համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը.

17) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային և հողաշինարարական փաստաթղթերը կամ դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում ընդունելու վերաբերյալ.

18) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին.

18.1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում հաստատելու այն վայրերի ցանկը, որտեղ կթույլատրվի կայանել վաճառքի և վարձույթի նպատակով ավտոտրանսպորտային միջոցները.

19) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների մասով (բացառությամբ Երևան քաղաքի)՝ պետական ճանապարհային մարմնի, իսկ երթևեկության անվտանգության մասով՝ պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման.

20) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում առաջարկ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ.

21) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնապատմական հուշարձանների).

22) սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը, տալիս է համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման թույլտվություն.

23) սահմանված կարգով տալիս է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվություն, ինչպես նաև համայնքի բնակավայրերում այդ թույլտվության տրամադրումը կարող է լիազորել վարչական ղեկավարին.

23.1) տալիս է համայնքի կամ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշան, անվանում) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն.

24) իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ.

25) ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում.

25.1) օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր.

26) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության.

27) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը.

27.1) տեղական շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների և նրանց գործադիր մարմինների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի պահանջների կատարման համար անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ է կատարում համապատասխան ակտերում կամ ուժը կորցրած ճանաչում տեղական շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների և նրանց գործադիր մարմինների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերը.

28) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ.

29) օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակցում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցման ու հետևանքների վերացման, սեյսմիկ անվտանգության ապահովման հետ կապված աշխատանքների կազմակերպմանը և այդ ուղղությամբ ձեռնարկում համապատասխան միջոցներ.

29.1) համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հակակոռուպցիոն ծրագրի նախագիծը.

30) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-26-րդ կետերով նախատեսված լիազորությունները համարվում են համայնքի ղեկավարի սեփական լիազորություններ, իսկ 27-29-րդ կետերով նախատեսվածները՝ պետության պատվիրակած լիազորություններ:

3. Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 29.1-ին կետով նախատեսված տեղական հակակոռուպցիոն ծրագիրը կազմելու նպատակով սույն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը մշակում և տեղական ինքնակառավարման մարմիններին է տրամադրում տեղական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման մեթոդաբանությունը:

*(35-րդ հոդվածը լրաց. 01.03.17 ՀՕ-54-Ն, փոփ. լրաց. 09.06.17 ՀՕ-94-Ն, փոփ. 21.03.18 ՀՕ-175-Ն, խմբ., լրաց. 13.06.18 ՀՕ-349-Ն, լրաց. 10.09.19 ՀՕ-154-Ն, 21.01.20 ՀՕ-24-Ն, փոփ., լրաց. 25.03.20 ՀՕ-169-Ն, 25.03.20 ՀՕ-191-Ն, լրաց. 11.02.21 ՀՕ-77-Ն, խմբ. 19.04.21 ՀՕ-168-Ն, լրաց. 20.01.21 ՀՕ-63-Ն, 17.11.21 ՀՕ-354-Ն, 09.06.22 ՀՕ-267-Ն, 26.10.22 ՀՕ-411-Ն, 04.03.22 ՀՕ-53-Ն)*

*(35-րդ հոդվածում 19.12.19 ՀՕ-308-Ն օրենքի 2-րդ հոդվածի լրացումը հնարավոր չէ կատարել, քանի որ 35-րդ հոդվածը 14-րդ մաս չունի:)*

*(09.06.22 ՀՕ-267-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*